

## ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ, Ի ԼԻԶՊՈՆ

Ս. Աթոռոյս Լուսարարայետ, Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեան, հրաւերովը Կիւլպէնկեան հաստատութեան Հայկական բաժնին, 17 Յուլիս երկուշաբթի առաւօտեան մեկնեցաւ Լիզպոն, մասնակցելու հաստատութեան յոբելինական Յիսնամեայ տօնակատարութեանց, որոնք տեղի ունեցան ընթացիկ տարւոյս Յուլիս 18-21ին: Լիզպոն հասնելուն, օդակայանին մէջ Լուսարարայետ Սրբազանը դիմաւորուած է Կարգադրիչ Յանձնախումբի անդամներուն կողմէ, որոնք յատուկ ինքնաշարժերով հիւրերը կը փոխադրէին *Ritz Four Seasons* շքեղ պանդոկը:

Երեքշաբթի, Յուլիս 18ի առաւօտեան, ժամը 10:00ին, սկսան պաշտօնական հանդիսութիւնները, հաստատութեան գլխաւոր սրահին մէջ, հովանաւորութեամբ Փորթուկալի նախագահ՝ Տոմֆ. Անիբալ Քալաֆօ Սիլվայի: Օրուան առաջին գլխաւոր խօսք առնողն էր Կիւլպէնկեան հաստատութեան նախագահ՝ Տիար Էմիլիօ Ռուի Վիլա, որ համառօտ պատմականն ու դրուատականը ըրաւ մեծ Բարեբարին, Տիար Գալուստ Կիւլպէնկեանի, ապա Տիար Ազեմետօ Փէրտիկաուին, որ գաղափարը յղացած էր հիմնելու Ֆոնտն ու ապա Կիւլպէնկեան Թանգարանը: Երկրորդ խօսողն էր Փրոֆէսոր Պարեթոն, որ խօսեցաւ Կիւլպէնկեան հաստատութեան խաղցած կարեւոր դերի մասին, Փորթուկալի ընկերային կեանքին մէջ: Իսկ երրորդ եւ վերջին խօսք առնողը

եղաւ Փորթուկալեան պետութեան Նախագահը, Վսեմաշում Տոմֆ. Անիբալ Քալաֆօ Սիլվան:

Ասկէ ետք ներկաները հրաւիրուեցան այցելելու Թանգարանը, հաղորդ դառնալու Տիար Կիւլպէնկեանի բարձր եւ նուրբ ճաշակին, որ միշտ ձգտած էր ձեռք բերելու միայն ու միայն որակաւորն ու լաւագոյնը: Հոս հրաւիրեալներուն նուիրուեցան *The Collector and his Taste* եւ *From Paris to Tokyo* գոյգ հատորները: Առաջինը՝ ճաշակ մը կուտար Տիար Կիւլպէնկեանի արուեստի քանկարժէք հաւաքածոյէն, մինչ երկրորդով՝ հրաւիրեալները հասու կ'ըլլային մեծ Հայուն նուրբ ճաշակին նոյնիսկ գիրքերու իր բացառիկ հաւաքածոյին մէջէն: Թանգարան այցին կը յաջորդէր ճաշկերոյթը, դարձեալ հաստատութեան ճաշարանին մէջ: Երեկոյեան, փոքրիկ հիւրասիրութենէ մը ետք, հաստատութեան մեծ սրահին մէջ տեղի կ'ունենար Կիւլպէնկեան երգչախումբի եւ նուագախումբի «Կալա» բացառիկ նուագահանդէսը:

Երկրորդ օրուայ ծրագրին մաս կը կազմէր հաստատութեան բոլոր պաշտօնեաներու մասնակցութեամբ ծաղկեպսակներու զետեղման արարողութիւնը, Տիար Կիւլպէնկեանի արձանին, որուն կը յաջորդէր պաշտօնեաներուն յատուկ ճաշկերոյթ մը, մինչ հիւրերը յատուկ փոխադրականներով կը մեկնէին Սինթրալի շրջանի բարձրագոյն կէտին վրայ գտնուող 19րդ դարու արքայական դղեակը, որմէ ետք հաստատութեան նախագահը

մասնաւոր նաշկերոյթով կը պատուէր հիւրերը ուրիշ հին պալատի մը մէջ: Երեկոյեան Փորթուկալի Արտաֆին Գործոց նախարարութեան կողմէ կը տրուէր պաշտօնական հիւրասիրութիւն մը, նախարարութեան շէնքին մէջ:

Այս երկու օրերու ընթացքին Լուսարարապետ Սրբազանը առիթը ստեղծած էր ծանօթանալու Տիար Միքայէլ Եսայեանի, որ անդամներէն է Կիւլպէնկեան գերդաստանին, եւ որ նախկին Տնօրէնն էր Հայկական բաժանմունքին, իսկ հիմա հանգստեան կոչուելով պաշտօնը փոխանցած էր զաւկին՝ Տիար Մարթին Եսայեանի: Լուսարարապետ Սրբազանը օգտուելով առիթէն հրաւիրած է պարոնայք Մարթին

Եսայանն ու Փոլ Կիւլպէնկեանը այցելելու Սուրբ Քաղաքն ու Հայոց Պատրիարքարանը, ապա անոնց հետ խօսած է Սուրբ Աթոռի անմիջական կարիքներու մասին, որոնց համար քաջալերող հաւաստիացումներ տուած են երկուքն ալ: Յուլիս 20ը ըլլալով պաշտօնական ծրագիրներու վերջին օրը, հիւրերէն ոմանք վերադարձան:

Լուսարարապետ Սրբազանը վերադարձաւ Ս. Աթոռ Յուլիս 22ի առաւօտեան, տպաւորուած ու գերազանցօրէն հպարտ, Հայու մը թողած արքայական աւանդով, հոգ չէ թէ օտար երկրի մը, ուր առնուազն... թողօնը ծառայած է նպատակին:

ՏԵՂԵԿԱՏՈՒ